

Հ. Բ. Ռ. ՄԻԹՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԲՈՂԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ռ. ՄԻԹՈՒԹԻԵԱՆ կրթական կեզր. Յանձնաժողովը, 1963-64 դպրոցական տարելրչան համար, համալսարանական ուսումնաց յատուկ թոշակներու բաշխումին մասին կը ձանուցան հետեւելը՝ չահագրգուսողներու ի գիտութիւն:

1. Միթութիւնը ներկայիս ունի 100 թոշակընկալ ուսներ, որոնցմէ 20 հոգի այս տարի իրենքն ընթացքը կ'աւարտեն: Իրենց ուսումը զեռ պիտի շարունակեն ուրեմն 80 հոգի, որոնք կը թոշակ պիտի ստանան յառաջիկայ ըրջանին են, եթէ յաջողութեամբ անցուցած են իրեն տարեվերջի քննութիւնները:

2. Իրրի նոր թեկնածու այս տարի պիտի ընդունուին միայն 20 հոգի, հետեւալ պահանջներով.

ա) Կրթաթոշակ պիտի տրուի նիւթական միջացներէ զուրկ և օժտուած երիտասարդներու, որոնք համալսարան պիտի յաճախեն Եւրոպայի կամ Մերձաւոր Արեւելքի զանազան երկիրներու մէջ:

բ) Նախընտրութիւն պիտի տրուի այն երիտասարդներուն, որոնք իրենց համալսարանական ուսումնաց կեցրոններու մօտ կը բնակին և նիւթական մեծ զանողութեանց չեն կարուտիր իրենց զարդնթացքին հետեւելու համար:

զ) Հաւասար արժանիք ունեցող թեկնածուներու մէջէն, պիտի ընտրուին անոնք՝ որոնք բարձրագոյն ուսումնաց կեցրոններու մօտ կը բնակին և նիւթական մեծ զանողութեանց չեն կարուտիր իրենց զարդնթացքին հետեւելու համար:

դ) Պայման է որ թեկնածուները հայերէն գիտնան:

ե) Իրենց աւարտական զամարանի նիշերան ընդհանուր միջինը նուազագոյնը ուկար է ըլլայ 80 առ հարբուր:

3. Մասնաւոր յատկացումներ պիտի կատարուին հ թեկնածուներու, որոնք արդէն ազացոյցը տուած են թէ մատասարական կամ գեղարվասարական հիւզի մը մէջ բացառիկ ընդունակութիւն ունին և կ'ուզնի իրենց մասնագիտութիւնը աւելի խորացնել կամ կատարելագործել:

4. Որոշ հիմնագրամէ մը, Հ. Բ. Ռ. Միթութեան Ամերիկայի կեզր. Յանձնաժողովին կողմէ փախատուութեան ձեռվ կրթաթոշակ պիտի տրուի Ամերիկա ծնած այն հայ ուսանողներուն, որոնք այս երկրին մէջ համալսարան մը պիտի յաճախեն:

5. Ուրիշ մասնաւոր հիմնագրամէ մը կը նան օգտուիլ ամերիկաբնակ երիտասարդներ, որոնք արտասահմանի հայ վարժարանի մը մէջ կը փափաքին զանում ուսանալ:

6. Թոշակները մէկ տարուան ըրջանի համար են և կը վերանորոգուին երը սան մը իր վերջին քննութեանց արդիւնքը մեզի ուղարկելով իր ուսումն շարունակելու բազմանք լայտնի:

7. Որիէ համալսարան ընդունուելու համար երկրորդական վարժարանի մը վեկայականը ի ձեռին չունեցող թեկնածուներու գիմնասիեր անհետանը կը մնան:

8. Թեկնածուները հարկ է իրենց գիմնամ կատարեն մինչեւ Մայիս 15, սարք նշանակուած հասցէին: Ազա անոնց պիտի զրկուին հարցարաններ, որոնց տրուած պատասխաններուն և զանոնք հաստատալ փաստաթուղթերուն հիման վրայ Միթութեան կրթական Յանձնաժողովը պիտի կատարէ թոշակներ սաներու ընտրութենք և իր յարմար զատած կրթաթոշակին պամարը պիտի սրուէ անոնցմէ իրաքանչիւրին համար, Յուլիսի վերջը:

Այս յայտարարութիւնը միաժամանակ հրատարակութեան կը տրուի Ամերիկայի և արտասահմանի հայ թերթերուն մէջ:

Դիմուն կեդր. ՎԱՐՉ. ԺԱՂԱՔԻ

Mr. K. Guiragossian, Executive Director

Armenian General Benevolent Union

250 Fifth Avenue, New York 1, N. Y., U. S. A.